ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

1967 թ. մայիսի 6-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գիտական նստաշրջան, որը նվիրված էր Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 50-ամյակին։

Նստաշրջանում կարդացվեցին մի շարք զեկուցումներ։ Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Ասլանյանը «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և պատմության դիալեկտիկան» զեկուցման մեջ ընդգծեց, որ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության նշանակությունը մեծ է ոչ միայն սոցիալական կյանքի վերափոխման գործում, այլև այն նոր աստիճանի բարձրացրեց մարդկային հասարակական միտքը, նշեց հասարակության առաջադիմության ուղիները, այդ առաջադիմությանը հաղորդեց վիթխարի տեմպեր և իսկական մարդասիրական ուղղություն։ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը հաստատեց մարքսիզմ-լենինիզմի արմատական դրույթները համաշխարհային պատմության օրինաչափության, զարգացման ուղղության և ընթացքի վերաբերյալ, այն խորտակիչ հարված հասցրեց ոչ միայն հին աշխարհի հիմքերին, այլև այդ աշխարհը գովարանող գաղափարներին։

Այնուհետև զեկուցողը նշեց, որ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը համաշխարհային պատմության ամբողջ ընթացքում առաջադրեց համաշխարհային պատմության զարգացման, սոցիալական առաջադիմության պրոբլեմների լուծման ուղիներ, ժողովրդական մասսաների անելիքները այդ գործում և այլն։ Մեծ Հոկտեմբերը գծագրեց մարդկության ապագայի հորիզոններ, կախարդական ուժով կյանքի կոչեց մարդկանց միջև նոր հարաբերություններ, բարոյական նորմաներ, հասարակության զարգացման նոր օրինաչափություններ և այլն։

Իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Բեգյանի զեկուցումը նվիրված էր սովետական ազգային պետականության զարգացման հարցին։ Զեկուցողը նշեց, որ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը խոշոր վերափոխություններ մտցրեց ոչ միայն պետության սոցիալ-քաղաքական, տնտեսական, գաղափարական և կուլտուրական կյանքում, այլև ազգային հարաբերություններում։ Լենինյան ազգային քաղաքականության իրականացման շնորհիվ մեծ հեղաշրջում կատարվեց մեր երկրի ավելի քան 130 ազգերի և ժողովուրդների կյանքում, որոնք միավորված են այս կամ այն ազգային պետականության ձևով։ Նա օրինակ բերեց Հայաստանի սովետական հանրապետությունը, որը մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը համարվում էր ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամասերից մեկը։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանը հսկայական զարգացում ապրեց։ Հանրապետությունում ստեղծվեց և արագ թափով զարգանում է բազմաճյուղային ժամանակակից արդյունաբերություն՝ գունավոր մետալուրգիա, քիմիա, մեքենաշինություն, գործիքաշինություն, էլեկտրոնիկա, ռադիոէլեկտրոնիկա և այլն։ Հայաստանի ձեռնարկությունների պիտակով բազմապիսի արտադրանք է արտահանվում աշխարհի 70 երկրներ։

Նստաշրջանի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին նաև փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մ. Անտոնյանի «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և ժողովրդական մասսաների պատմական ստեղծագործությունը», սեկտորի գիտաշխատող Ռ. Նավասարդյանի «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և անհատի ազատությունը» թեմաներով զեկուցումները։

* * *

Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի գիտական նստաշրջանը նվիրված էր հայ կերպարվեստի պատմությանը։

Բացելով նստաշրջանը, ինստիտուտի դիրեկտոր, պրոֆեսոր Ռ. Զարյանը նշեց, որ նստաշրջանը Մեծ Հոկտեմբերի հորելյանի առթիվ հայ արվեստագետների գիտական նվաճումների ստուգատեսներից մեկն է։

Երվեստի վաստակավոր գործիչ Ռ. Դրամբյանի զեկուցումը նվիրված էր հայ միջնադարյան կերպարվեստի հայտնի ուսումնասիրող Լ. Ա. Դուռնովոյի կյանքին ու գիտա-հետազոտական գործունեությանը։ Գիտնականը և նրա աշակերտները պատճենահանելով հայկական բազմաթիվ հուշարձանների որմնանկարները, մեծ ծառայություն են մատուցել հայ մշակույթին. մանավանդ եթե նկատի ունենանք, որ այդ որմնանկարների մեծ մասը այլևս գոյություն չունի։ Լ. Ա. Դուռնովոյի ղեկավարությամբ պատճենահանվել են նաև 68 ձեռագրերի մանրանկարները և 1951 թ. հրատարակվել հին հայկական մանրանկարչության ալբոմը։

Արվեստագիտության թեկնածու Լ. Ադարյանը խոսեց հայ վաղ միջնադարյան արվեստում եղած սիմվոլիկայի մասին։ IV—VII դդ. արվեստում, սկսած դեռ կատակումբաների որմնանկարներից, որոշակի նշանակություն են ստանում սիմվոլիկ ընկալումները։ Զեկուցողը հայկական վաղ միջնադարյան մի շարք բարձրաքանդակների վերլուծությամբ ցույց տվեց, որ այդ տեսակենները իրենց արտահայտությունն են գտել նաև Հայաստանում (Աղցի Արշակունիների դամբարանը, Քասաղի բազիլիկայի քանդակները և այլն)։ Այնուհետև Լ. Ադարյանը կանգ առավ որոշ տեսական հարցերի վրա, որոնք առնչվում են վաղ միջնադարյան արվեստում տեղ գտած սիմվոլիկ մտածելակերպի հետ և պարզաբանում նրա ոճական ու գեղարվեստական հարցերը։

Ճարտարապետության թեկնածու Ս. Մնացականյանը զեկուցեց Աղթամարի Արծրունյաց իշխանական տան անդամների քանդակների մասին։ Աղթամարի տաճարի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կառուցվել էր փառաբանելու Արծրունյաց ամբողջ իշխանության տոհմը, և նրա պատերին տեղ էին գտել ոչ միայն Վասպուրականի թագավոր Դավիթ Արծրունու, այլև նրա թագավորական տան մյուս անդամների դիմաքանդակները։ Բարձրաքանդակների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ արևելյան ճակատի խնճույքի տեսարանում պատկերված են Դավիթ արքան և նրա երկու որդիները՝ Դերենիկն ու Աբուսահլը։ Նույն ճակատի որսի տեսարանում ներկայացված է Դավթի կրտսեր եղբայրը՝ զորավար Գուրգենը։

Տաճարի հյուսիսային ճակատում, արևելյան կողմի բազմանիստ ելուստի վրա, պատկերված է Դավիթ արքայի ավագ եղբայր Աշոտ Արծրունին, որն Արծրունիների անկախ թագավորություն հիմնելու նպատակով ապստամբեց Սմբատ Բագրատունու դեմ և համագործակցեց արաբների հետ։ Որպես այս ամենի խորհրդանշան, այն պատկերված է Արծրունյաց իշխանների պարեգոտով և արաբական պատվանշան հանդիսացող շալմայով։

Արևմտյան ճակատում պատկերված երկու կանացի դիմաքանդակներից մեկը, հավանաբար, ներկայացնում է Դավթի մորը՝ իշխանուհի Հրանուշին, իսկ մյուսը՝ թագուհի Կեռանին։ Իշխանական տան կրտսեր անդամները, որոնք նույնպես իրենց մասնակցությունն են ունեցել տաճարի կառուցման գործում, պատկերված են ոչ մեծ դիմաքանդակների ձևով՝ տեղավորված տաճարի արևմտյան խաղաթեի երկու կողմերում։

Արվեստագիտության թեկնածու Մ. Ղազարյանը զեկուցեց XVII դարի հայ նկարիչ Աստվածատուր Սալթանյանի (Ռուսաստանում՝ Բոգդան Սալթանով) ստեղծագործական կյանքի մասին։ Նա 1666 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարի առաջարկով Պարսկաստանից տեղափոխվում է Մոսկվա և կարճ ժամանակում դառնում Կրեմլի խոշորագույն նկարիչներից մեկը։

Սալթանյանը կատարել է դիմանկարներ, կոմպոզիցիոն աշխատանքներ, սրբապատկերներ, վիտրաժներ, կիրառական արվեստի բազմազան իրեր։ Նա ռուսական իրականության մեջ առաջին հաղթական կամարն է կառուցել Մոսկվայում՝ Ազովի գրավումից հետո, Պետրոս Մեծին դիմավորելու համար։ Զբաղվել է գեղանկարչության տեխնոլոգիայի հարցերով, ունեցել է բազմաթիվ աշակերտներ։ Մ. Ղազարյանի Իրանում կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ Սալթանյանը սերում է Նոր Ջուղայեցի Խոջա Սալթանի ընտանիքից՝ և նրա կյանքի վերջին տարիները նույնպես անցել են Նոր Ջուղայում։

Աստվածատուր Սալթանյանի մասին շատ քիչ է գրվել և նրա անունը միանգամայն անարդարացի դուրս է մնացել հայ արվեստի պատմությունից։

Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ